

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՍՓԻՌՔԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳԸ՝ ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Մեծ Եղեռնի դարադարձի (1915-2015) սա վերջին տարիներում գեթ թեկուզ եւ շատ ուշացած ըլլանք, հարկ է՝ անլետաձգելի հրամայական մըն է, դուրս գալ՝ մեր հնացած՝ աւանդութիւն դարձած "Ապրիլ 24"-եան ծիսակատարութիւններէն, անդրանցնի՝ անհարկիօրէն երկարած, ցեղասպանութեան լոկ բարոյական ճանաչումներու մեր ինքնախարհական պահանջատիրութեան հանգրուանը, որ տեւեց 93 երկար տարիներ... Եւ թեալկոյն՝ արդարութեան 2024-ի վերականգնումին, հողային պահանջատիրութեան հանգրուանին, իրաւաբաղաւորական զգոնութեամբ դիմակայելով՝ սփիւռքացած Արեւմտահայութեան սպասնացող վտանգներուն:

Այդ վտանգներէն մին է՝ Ամերիկեան Սփիւռքագիտութիւնը, որ մէկ նորաստեղծ ճիւղն է Ամերիկեան Հայագիտութեան՝ ամերիկեան պետական (կայսերապաշտական) պատմագրութեան մէջ, որ "Պոպուլարիզմ"-ը փոխարինելով "ճանաչողական"-ով, կը հակադրուի՝ ոչ միայն հայկական, այլև՝ նոյնիման ամերիկեան ժողովրդական ճշմարիտ պատմագրութեան... (Ամերիկեան "պետական կայսերապաշտական" ու "ժողովրդական" զոյգ պատմագրութեանց բաղադրականներն համար տեսնել՝ Howard Zinn-ի "The Popular History Of U.S.A." հատորը):

Հայ մատենագրութեան մէջ, տասնամեակ մը առաջ, լոյսին եկաւ պատմագիտութեան թեկնածու Արմէն Այվազեանի քննական տեսութիւնը՝ "Հայաստանի Պատմութեան Լուսաբանումը Ամերիկեան Պատմագրութեան Մէջ" վերնագրով, որ (մեզի ծագօթ) առաջինը եղաւ հնչեցնելու քափեցնող ահագանքը՝ ամերիկեան պետական-կայսերապաշտական պատմագրութեան ՀԱՄԱՀԱՅ անգլագիտութեան դէմ, եւ՝ հայաստանեան ներկայի պատմագետներուն ("անկախական") պահած լուրջութեան շուրջ: 1998 թուին Երեւան հրատարակուած այս հատորի ներածութեան մէջ ըսուած է՝ "... ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՋՕՐԱՅՈՒՄԸ 28ԱՆԿԱՅՈՂ 8ԱՅՏՆԻ ԵՒ ԱՆՅԱՅՏ ռժերն խորապէս գնահատելով Հայոց Պատմութեան ռազմավարական նշանակութիւնն ու ներուժը, վաղուց ի վեր իրականացնում են ԶԱՅՆ ՄԱՍ-ՄԱՍ ԿՈՂՈՊՏԵԼՈՒ եւ ոչնչացնելու ծրագրուած բաղաբաւանդութիւն: Խօսքս վերաբերում է՝ միջազգային գիտական շրջանակներում, արդէն տասնամեակներ ի վեր շարունակուող՝ հայոց պատմութեան հիմնահարցերի խեղաթիւրմանն ուղղուած կազմակերպուած գործողութիւններին: Հայ հասարակութիւնը ծանօթ էր թորքական ու արդեթանական "հայագետների" հակագիտական գործունէութեանը, որին, ԽՈՐՀՐԳԱ-ՀԱՅ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԸ, 1960-1980-ական թուականներին ՀՈՒԺԿՈՒ ՀԱԿԱՆՍՈՐՈՒՄԸ ՀԱՍՏՐՅԵՑԻՆ: Սակայն... դեռեւս լուրջ գնահատական չի տրուել Արեւմտքի, ՅԱՏԿԱՊԷՄ՝ ԱՄՆ-ի հայագիտական կեդրոններում ծաւալուող նոյնօրինակ գործունէութեանը: ...ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿԵՂԾ- ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԻՐ ՀԵՏԵԻՆԱՆՔՆԵՐՈՎ ԱՌԱԻԵԼ ՎՆԱՍԱԲԵՐ Է ԵՒ ՎՏԱՆԳԱԻՈՐ, քան թորք-արդեթանական պատմագիտական գեղծարարութիւնը, քանզի այն Հայաստանի շահերի դէմ ուղղուած ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍ-ԾՏԱՐՈՎ տարտող քարոզի բուն հիմքն է, եւ նոյն այդ քարոզի բաղադրուցի մասը"....:

Տարբեր չէ պարագան Ամերիկեան Սփիւռքագիտութեան, որ ընկերային-հասարակական գիտութիւններում մէջ՝ վերջին քսանամեակին, իր ուշագրաւ տեղը գրաւած բաղադրական սփիւռքագիտութեան մէկ ճիւղն է, որ կը ֆիւնամաստորի ամերիկեան իմպերիալիզմին կողմէ, զայն ծառայեցնելու համար իր կողմէ հետապնդող աշխարհակալական ծրագրերուն:

Պատմութեան երկայնքին, գոյութիւն ունեցել են տարբեր ազգերու եւ երկիրներու սփիւռքներ: Ինչպէս՝ Մոսկովականներու ("Ռեւանդներ"), Չինացիներու, Յոյներու, Հրեաներու, Հայերու, Արաբական Մարդկայի եւ այլ երկիրներու սփիւռքները: Ամերիկացիներուն համար՝ մինչեւ 20-րդ դարու 80-ականներու կէտը, "Diaspora" բառը հոմանիշն էր "Jews"-ի: Սակայն, անցեալ դարու 80-ականներու կէտէն ի վեր՝ ԱՄՆ-ի իշխանաւորներուն մօտ ար-

թնցաւ մեծ հետաքրքրութիւն տարբեր ազգերու եւ երկիրներու սփիւռքներուն ուղղութեամբ: Ամերիկեան այս նորարարած հետաքրքրութեան զարգացումն է՝ այն աշխարհակալական-հարստահարական ծրագիրը, որ կը թաքնուի՝ մերթ "համաշխարհացանցում"-ի մերթ "Նոր Աշխարհակարգ"-ի (New World Order) անուանումներուն ետին, բայց որ կը ծրագրէ ստեղծել՝ պատերազմական արդիւնաբերութեան եւ նաֆթի շահագործումի գլխաւորաբար ամերիկեան ֆինանսատէրերու "Համաշխարհային Կառավարութիւն"-ը (World Government), վարելով քոզմոփոլիթ-ազգային ռազմավարութիւն մը՝ բոլոր ազգային պետութիւններուն, բոլոր ազգ-պետութիւններուն եւ նոյնիսկ ԱՄՆ-ի "ֆետերալ" կառավարութեան դէմ... (Տես՝ Gary H. Kah, "On Route To Global Occupation", Lafayette, Louisiana, 1992, Huntington House Publishers):

Արդարեւ, անցեալ դարու 80-ականներու կէտէն, նոր-ազատական վայրի Դրամատիքութեան համաշխարհացանցումի կողմնակից մեծ ֆինանսատէրերը՝ ԱՄՆ-ի առաջնորդութեամբ, հետեւողականօրէն՝ կը քանդեն "ազգային" պետութիւններն ու մաքսային սահմանները, սեփականաւորումի (privatisation) կ'ենթարկեն պետութիւններու ազգային ձեռնարկութիւններն ու հանրային ծառայութիւնները, զանոնք փոխանցելով՝ անդրազգային (trans-national) կամ բազմազգ (multi-national) ֆինանսական հսկաներու, պատճառ դառնալով՝ մեծածախ գործարկութեան, եւ հետեւաբար՝ ածանցիկ աշխատատեղ ուժերու եւ որակաւոր մտաւորական քարտերու արտագաղթին ու՝ նորանոր սփիւռքներու յատաշարումին: Այսպէս՝ անոնք կը խանգարեն այս սփիւռքներու նստակայանութեան հսկումներն ու կայունութեան ձգտումը, արգիլելու համար անոնց ազգային ինքնութեան պահպանումի ճիգերը, որպէսզի զանոնք վերածնեն՝ ազգային դիմագիծէ գործի, անդրազգային, քոզմոփոլիթ եւ շարժունակ (mobile) զանգուածներու եւ "բեկորներու":

Ահա՛ այս ռազմավարութեան միաժամանակ քողարկումն ու կենսագործումն է՝ որ կը կատարէ ամերիկեան, եւ ընդհանրապէս՝ արեւմտեան "Սփիւռքագիտութիւն"-ը: Ասկէ՝ "սփիւռքագիտական" գիտատեղումներու եւ հրատարակութիւններու սուկին սնան անուրը, որ սկսաւ 1985 անկիւնադարձային թուականէն, երբ արդէն սկսած էր փլուզումը՝ Խ. Միութեան զլխաւորած Սոցիալիզմի Ժակատին, ճամբան բանալով՝ նոր ազատական վայրի Դրամատիքութեան "համաշխարհացանցում"-ին ու Միաբեւեռ աշխարհի մը գոյատուան ստեղծումը...:

Արդ, ԱՄՆ-ի կայսերական կառավարութիւնը անպայալ մօտեցաւ նաեւ՝ հայկական եւ օտար հայագիտական կեդրոններուն, զանոնք ծառայեցնելու համար՝ սփիւռքագիտութեան իր սեփական ծրագրին:

Պատահական չէր՝ որ 1987-ին արդէն, Զօրեան Հիմնարկը կը հրապարակէր մասնակցելու "գիտաժողով"-ի մը, որ տեղի պիտի ունենար Նիւ Եորքի Քոնիկ համալսարանին մէջ, քըն՝ նարկելու համար դասական երեք սփիւռքներու՝ "Հրեայ" (Մոսկովական), Հայ եւ Յոյն, ապազայի հետանկարներ...: ԱՄՆ-ի կառավարութիւնը ինչո՞ւ հետաքրքրուած էր ասոնց ապագային հարցով...: Իսրայէլ եւ Յունաստան հրաւիրուած էին մասնակցելու՝ պետական կարգով: Մինչ Հայոց պարագային, չէր հրաւիրուած Խ. Հայաստան՝ Սփիւռքագիտութեան հետ Մշակութային Կապերու պետական Կոմիտէն...: Այլ՝ Զօրեան Հիմնարկը միայն... բազմաթիւ հայ կեդրոններուն մէջէն: Եւ Զօրեան Հիմնարկը՝ փութաբարօրէն գործուղեց, ստանց խորհրդակցելու Հայաստանի պատկան իշխանութեան հետ, Հրաջ Զատոյեանը (որ արդէն Քոնիկ համալսարանի վարչական անձնակազմին մաս կը կազմէր, եւ՝ ԱՆԶԱ-ի գծով, ուսմանահայ արտագաղթողներէն էր...), նաեւ՝ իր ամերիկամտութեամբ ծանօթ ժիրայր Լիպարիտեանը, եւ՝ Մինաս Թեօլէլեանի որդի, Խաչիկ Թեօլէլեանը:

Յիշեալ երեքոն հոն նոր կ'անդրադառնան թէ իրենց մինչ այդ գիտցածն ու հաւաքած

պաշարը հայագիտութեան եւ սփիւռքագիտութեան մասին, զուրկ են (եղեր) "գիտական" մեթոտականութեան եւ "կրթանքային" (discipline) մտածողութեան...: Եւ ուրեմն, մեծ փութաբանութեամբ՝ կը սկսին սորվի... սփիւռքագիտութեան "գաղտնիք"-ները ամերիկեան պրքենարանէն, եւ շուտով կը դառնան եռանդուն գործիչները՝ այդ "նոր" սփիւռքագիտութեան:

Եւ երկու տարին չանցած, 1989-ին, Զօրեան Հիմնարկը ֆինանսական միջոցները կը գտնէ հրատարակելու սփիւռքագիտական պարբերաբերք մը՝ Խաչիկ Թեօլէլեանի խմբագրութեամբ: Իսկ այս պարբերաբերքը կը կրէ շատ խօսուն անուն մը՝ "Diaspora: a journal of TRANS-NATIONAL Studies" ("Սփիւռք՝ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ Ուսմանց Հանդէս"), ազգային փոխարէնը անդրազգային եզրի գործածութիւնը չարազուշակ նորութիւն մըն է:

ԱՄՆ-ը՝ ըլլալով խառնակեցնող, ՏԱՐԱ-տնկեալ (TRANS-planted) իր տիրած երկրի բնիկ ժողովուրդին ուկորներուն վրայ հիմնադրուած կայսերական գերպետութիւն, իր գաղափարախօսութեան ու շահերուն դէմ կը գտնէ՝ բոլոր պատմական հայրենիքի մը մէջ բնական կազմաւորումով ծնունդ առած եւ հին մշակույթ ունեցող ԱԶԳԵՐԸ... եւ պատահական չէ որ ան՝ Միջին Արեւելքի մէջ, նախ՝ օգնեց Թուրքիոյ եւ Իսրայէլի տարաւանկալ պետութիւններու ստեղծումին,- ուրիշ ժողովուրդներու պատմական հայրենիքին մէջ եւ անոնց ուկորներուն վրայ...- եւ ապա՝ զանոնք իր սատարակները նշանակեց տարածաշրջանին մէջ: Հետեւաբար, ԱՄՆ կ'ուզէ ջնջել սփիւռքներու ազգային դիմագիծերը, եւ կ'ուզէ զանոնք վերածել՝ խառնակեցնող, անդրազգային, քոզմոփոլիթ, աստանդակալ եւ անդիմագիծ բեկորներու պագուածներուն... որոնք հարկադրաբար կը զանգուած ամսանագիւն աշխատութիւնները: Դասակարգային եւ ազգային շահագործումն ու բռնութիւնը կ'են նպատակը հետապնդելով, կայսերական ԱՄՆ-ը կ'ուզէ ջնջել կամ ոտնահարել՝ հասարակապէս թէ՛ ազգային պետութիւններու (որոնք հին են եւ՝ ունին գերազանցապէս ազգային մշակույթ ու պատմութիւն) եւ թէ՛ ազգ-պետութիւններու (որոնք կը կոչուին Nation-States, նոր են յարաբերաբար եւ որոնք հիմքը՝ պետական սահմաններն նոյնութիւնն է հիմնականապէս), այսինքն, այս երկու խումբերու պետութեանց գերիշխանութիւնը, հեզաստօրէն եւ անարգել իրականացնելու համար իր աշխարհակալական ծրագիրը՝ "Համաշխարհացանցում"-ի (Աշխարհի միաբեւեռացումի) դրօշին ներքեւ (Ի դէպ՝ "համաշխարհացանցում"-ը զլխովին հակառակն է Էթիւմէնիզմին եւ Ինտերնացիոնալիզմին, քանզի այս վերջին երկուքը չեն պահանջեր՝ ազգային եկեղեցիներու եւ ազգերու ՄԱՀԸ... կամ միաձուլումը, այլ կը ձգտին ասոնց փոխ-մերձեցումին, փոխ-հարստացումին ու սերտանին՝ ընդլուծումի ճամբով, ոչ՝ պատերազմով...):

Ահա թէ ինչո՞ւ՝ ամերիկեան սփիւռքագիտութիւնը կը քարոզէ այն վարկածը, թէ Ապագան կը պատկանի "համաշխարհացանցում"-ին, ուր գոյութեան իրատեւք պիտի չունենան՝ ազգային եկեղեցիներն ու պետութիւնները, պատմական իրաւունքներն ու անոնց յենած պահանջատիրութիւնները, հայրենի հողին կառչածութիւնը եւ ամէն բնոյթի կապուածութիւնն ու հաստատարութիւնը: Եւ թէ՛ ապագային մէջ պիտի գոյատեւեն միայն ու միայն անդրազգային սփիւռքներու բեկորները... եւ ոչ թէ՛ ազգային դիմագիծով սփիւռքներու հասարականութիւնները...: Նաեւ թէ՛ այս վարկածին հետեւող սփիւռքագիտութիւնն է՝ "միակ գիտական"-ը, միակ իրաւաւորութեանը: Ուրեմն ՄԱՀ՝ Տարագիր Հայութեան:

Արդէն իսկ՝ դժբախտաբար, այս ամերիկեան վարկածը յաջողած է ուղեղալուստումի ենթարկել կարգ մը հայ սփիւռքագետներ, որոնք սկսած են զայդ ներկայացնել որպէս իրենց սեփական վարկածը...:

Մասնաւորաբար տխուր է Խաչիկ Թեօլէլեանի մը պարագան, որ ասանց այլայլելու կրնայ գրել սա ձեռի բաներ.- "Ես իմ որոշ գրողութիւններու մէջ, հայութիւնը ԱԶԳ չեմ

կոչեր, այլ ԱՆԴՐԱԶԳ, եւ այս բարդ ու զարգացող հասկացութիւնը սահմանուած է աւելի ուժակալութեամբ օժտուելու մօտ ապագային, որ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆԱԿԱՆ (transnational) եւ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆԱՅՈՒՄԻ (mondialisation) ԱՊԱԳԱՅ ՄԸ պիտի ըլլայ հասանաբար" (Տես՝ "ՅԱՌԱՋ-Միտք եւ Արուեստ" թիւ 280, 7 Ապրիլ 2002): Լաւ է որ ան "հասանաբար" կ'ըսէ, եւ ոչ՝ վստահաբար..., քանի որ ինք եւս վստահ չէ՝ թէ ամերիկեան այս վարկածը կրնայ յաղթանակել վերջնականապէս: Խ. Թեօլէլեան քիչ անդին կը խոստովանի՝ բարեբախտաբար, իր միտքը խոտովոյ ու լլկող հանգամանք մը: Ան բառացիօրէն կը գրէ՝ "դիտար է ինձի նման որոշ չափով ազգայնամիտ սփիւռքագիտութիւնը, որ իր նախընտրած ճիւղը (սփիւռքագիտութիւնը) կը բարգաւաճի, մասամբ որովհետեւ ԱԿԱՄԱՅ կ'օգտուի ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿԱՌՈՅՑԻ ԳՆԱԽՐԱՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ: ԲԱՅՑ ԱՅԳ ԱՅԳՊԷՄ Է (Բոլոր ընդգծումները մերն են՝ Գ. Տ.):

Ան կը խոստովանի՝ "կ'ընդունի", բայց՝ չի գղջար, այլ՝ լուրջօրէն կը համակերպի իրեն վերապահուած (որո՞ւ կողմէ) այս տխուր վիճակին, որովհետեւ (եղեր)՝ այդ "այդպէս է"....:

Բայց, իրօք այդ այպէս է: Որպէս չքմեղանք ան կ'ըսէ՝ թէ կը մերժէր "ունայն ինքնութիւն մը", պարունակութիւն չունեցող ինքնութիւն մը":

Ընդէն է՝ թէ ինքնութիւնը, բնականաբար, անսարմանակ չի կրնար մնալ: Ատիկա պիտի լեցուի կամ՝ սպառողական ընկերութեան շուկայական մշակույթի արժեհամակարգով, եւ կամ ալ՝ զայն կրնանք լիցքատրել Տարագիր Հայու ինքնութեան գիտակցութեամբն ու անկէ բխող յանձնառութեան բովանդակած խորհրդանշաններով եւ աշխատանքի ծրագրով: Այդ-ժամ՝ Հայ Սփիւռքը կը կառչի իր արմատներուն ու անցեալին եւ ներկայի իր առաքելութեան, պահպանելով իր ազգային դիմագիծը, եւ չի վերածուիր՝ անդիմագիծ, անդրազգային բեկորներու բովանդագործի զանգուածի մը, գոր կը քարոզէ ամերիկեան սփիւռքագիտութիւնը մեկնելով՝ "Ամերիկեան կայսերական կառոյցի նախընտրութիւններէն": Հայերէն մտածող մտաւորականը քաջ գիտէ իր ինքնութեան բովանդակութիւնը եւ զայդ չի փոխարինէր ամերիկեան-շուկայականով...:

Այսօր, Հայագիտութեան եւ Սփիւռքագիտութեան կեդրոններու հայ գիտաշխատողներէն կը պահանջուի՝ մտածել հայօրէն եւ հայերէն... արտակարգ զգոնութեամբ դիմակայել ամերիկեան վարկածին ներկայացուցած վտանգին ու սպառնալիքին, եւ վճռականօրէն մերժել համակերպիլ ստոր հակագիտական ու պատմազանց դրոյններուն, ստանց զայսպիսիքով քարոզուող կարծեցեալ "գիտականութեան" կեղծ շարքէն ու ստալոյ "կրթանքային մտածողութեան" խորհրդաւոր շղարշէն եւ... կաշառքներէն: Չմոռնալով՝ թէ ժողովուրդի մը մտաւորականը արժէք մը կ'ունենայ, երբ հաստատարի մնալ՝ նախ իր ժողովուրդին, եւ ապա նաեւ՝ մարդկութեան քաղաքակրթական, ոչ շուկայական, մշակույթի ժառանգութեան:

Մեծ Եղեռնի 93-րդ տարեկիցին ստիով, մեծ փորձեցանք հակիրճ գիծերով յիշել իրաւաբաղաւորական մօտեցումով, սփիւռքացած Արեւմտահայութեան սպառնացող վտանգներէն՝ ամերիկեան հայագիտութիւնն ու սփիւռքագիտութիւնը, որոնց առաջինը՝ կը նենգափոխէ Հայոց Պատմութիւնը եւ հայ ժողովուրդը կը նկատէ եկոտր մը իր պատմական հայրենիքին մէջ... սատարելով՝ Թուրքիոյ տարատնկեալ պետութեան հայոց պատմական հայրենիքի ՏԵՐԷՆ ՈՒ ԲՆԻԿԸ ներկայանալու փորձերուն, որով ան իրաւացի պիտի ըլլայ մերժելու՝ Տարագիր Հայութեան իր պատմական հողը վերադառնալու իրաւունքը..., եւ որոնց երկրորդը՝ սփիւռքագիտութիւնը, կը սպառնայ դիմագեղծել Տարագիր Հայութիւնը եւ տապալաբար դնել անոր գոյամարտին եւ Հողային Դատի պահանջատիրութեան վրայ...: Երանի՛ լսողաց: